

հետ՝ ուր իր սէրը չի ծաղկիր և ուր ինք չի բազմանար: (Խօսքս անաղարտ մնացած հայեւրուն մասին է):

Մ. Իշխան հայ է, պանդուխտ է, կը տառապի տունի մը կարօտով, ու մեր բոլոր տարագիր երգիչներուն պէս — Միջին դարերէն մինչեւ ներկայ ժամանակներս — ճշմարիտ յուզումով լսելի կ'ընէ իր հոգիին ճիշերը:

Հատորը լաւ կը սկսի, լաւ կ'ընթանայ (երբեմն միայն հանդիպելով խոչընդոտներու), ու լաւ կ'աւարտի:

ՍԿԻՋԲ

« ՀԱՄԵՐԳ » . Ի տես տրտում ու զուարթ, փոքր ու մեծ, հին ու նոր տուններու, բանաստեղծին սիրտը յուզմամբ կ'ողողուի: Իւրաքանչիւր տուն « քարացած վէպ », « կենդանի դէմք » է իրեն համար:

Անշունչ տարրը կենսաւորել՝ զգայնութիւն մ'է գոր ունեցած են շատ բանաստեղծներ: Կը յիշեմ Մեծարեւոյի « Հիւղը ».

« — Դաշտի ճամբու մը վըրան,
Կամ ըստորտը լերան,
Ուղեւորին ժամանման
Ըսպատող հիւղն ըլլայի... »:

Մ. Իշխան իրմէ դուրս կը տեսնէ « քարացած վէպ »-ը, « կենդանի դէմք »-ը, մինչդեռ Մեծարենց, խորագոյն զգայնութեամբ, ինքն իսկ կը նոյնանայ իր առարկային հետ:

« Տուներ կան խեղճ, բազմատանջ. ուսը կըքած, դուռը փակ,
Տուներ կան գորշ, հիւանդկախ, որոնց դէմ մարդ կ'ուզէ լալ »:

Շատ յանկուցիչ բացատրութիւններ:

« Ու մինչ ամէն, ամէն մարդ աշխարհի մէջ ունի բոյն, Ունի մահուան դէմ պատուար՝ սերունդներու լուս վրկան՝ Հայու որդին, եւ միայն կը թափառիմ հոս անտուն »:

Ո՛չ մէկ օտար պիտի զգածուի այնքան սաստկօրէն, որքան հայը, ի լուր այս տողերուն, գեղեցիկ՝ ինչպէս ճշմարիտ:

ԸՆԹԱՑԲ

« ԱՆԱՊԱՏԻՆ ՄԵՋ ԿԵՆՏԻ »: Այս հնչեակը չի գտնուիր նախընթացին բարձունքին վրայ:

« ՀԱՅ ՄԱՄԻԿԻՆ ԱՂՈՐԲԸ »: Թոյլ է, հանրածանօթ ասացուածքներու յոգնած արձագանգն է կարծես:

« ՊԱՊԵՆԱԿԱՆ ՏՈՒՆԵՍ ԶԱՏ »: Առաջին քառեակ.

« Պապենական տունէս զատ՝ ինձ բացաւ դուռ ամէն տուն,
Եւ ուրիշի ոտքերուն թողած զարշանքն ու փոշին
Ընդունեցին ու տունն ինձ ընտանի ջերմութիւն
Որպէս լեզի շերտ մը հաց, կամ վարձըած, տրտում կին »:

Այս տողերուն դառնութիւնը մտաբերել կու տայ Տանդէի նշանաւոր տողերը.

« Tu proverai si come sa di sale
Lo pane altrui, e com'è duro calle
Lo scendere e il salir per altrui scale ».

Երկրորդ քառեակ.

« Ճամբուն վըրայ, ծագէ ծագ, թողի տունն անհատնում,
Սակայն երբեք զըղջումով ետ չըղարձաւ իմ հոգին
Պահ մը զաղտնի յածելու փակ դռներուն շուրջ մէկուն,
Եւ ո՛չ մէկ լոյս կանչեց զիս՝ լոյսերէն նոր քաղաքին ».

Հարունակութիւն.

« Անցայ մինակ, դանդաղուն և ցրուցի մաս առ մաս
Ամէն անկիւն, ամէն տեղ կեանքիս խորհրդն ու զանձեր
Եւ արդ ինձի անցեալիս յիշատակն իսկ չըմընաց... »:

Վերջին տողեր.

Ի՞նչքան աղքատ եմ այսպէս ես անկայան անբեւեռ...
Առանց փոքրիկ քու յարկիդ, ո՛վ անակն իմ հայրական ».

Հոս « մոթիֆ »-ը արդէն ընդհանրացած է: Ու և է մարդ, (չեմ ըսեր հայ մարդ) որ եղած է տաւազիր, իր զգացումները պիտի տեսնէ վերաւտադրուած հաւատարմութեամբ:

« ՆՈՐ ԾԵՆՈՒՈՂ ՏՈՒՆԸ »: Այստեղ բանաստեղծին յուզումը տարբեր չէ՝ նոր ծնող մանկան դիմաց զգացուած յուզումէն: Ամուլը, համաձայն սողմոսերգու Դաւթին, իր երջանկութեան գերագոյն աստիճանին կը հասնի՝ եթէ ըլլայ « որպէս մայր՝ որդւովք բերկրեալ », նոյնն է պարագան թափառական պանդուխտին, ան իր հարազատ տունով պիտի ըլլայ երջանիկ:

« ՀԱՅ ԼԵՋՈՒՆ ՏՈՒՆԸ Ե ՀԱՅՈՒՆ »: Մեծ ճշմարտութիւն մը: Իր բոլոր սրբութիւնները կորսնցընելէ ետք, հայը, օտարութեան մէջ, դարձեալ հարուստ է իր լեզուով:

Եթէ ոչ նոր, ընտիր է շարադրութեան նիւթը, լաւ պիտի ըլլար ընդլայնել, խորացնել զայն:

« ԳԵՋՈՒԻ ՎՐԱՆԸ »: Իրականացած է գնչուհիին երազը, նէ կ'ապրի « ճոխ զղեակի յարկին տակ » ուր կան փետուրէ բարձ ու մահիճ, նաժիշտներ, վայելքներ, փնտռած իշխանին հետ:

« Բայց օրէ օր իջաւ թախիժ իր աչքերու երկնքին
Սէրը շրջաւ դարձաւ իրեն, զղեակը՝ բանտ մը շատ նեղ,
Եւ իր աճող տաղտուկին մէջ՝ յանկարծ զգաց գնչուհին,
Որ իրենց պարզ վըրանին պէս չըկար ուրիշ անոյշ տեղ:
Կեցած անշարժ իր մեծաղբի հայելիին դէմ արծաթ,
Յիշեց տըրտում՝ հին վըրանին բարակ զըմէ՛թն աստղափառ »:

Խարոյկին շուրջ, իրենց ցեղի երգ ու պարերը զըւարթ, Յիշեց օրերն իր թափառիկ և արտասուեց դառնաբար »:

Քերթուածը եթէ հոս վերջ գտնէր, շատ լաւ եղած պիտի ըլլար, մինչդեռ Մ. Իշխան կը պատմէ թէ ինչպէս գնչուհին, գիշեր մը, զաղտնի կը փախչի, « կը բռնէ ճամբան այծի մագէ վրա... »: Մինչդեռ, ըստ իս, անդարձ կորսուած անցեալի մը դիմաց, յաւէտ դժբախտ, գնչուհին, աւելի սրտառու է դէմք մը պիտի ըլլար: Առանց յիշեալ վերջամասին, այս քերթուածը այնքան յուզումնալից է՝ որքան « Խօսեցեալք » վէպին այն հատուածը՝ յորում Աղեքսանդր Մանժոնի կը նկարագրէ Լուչիայի բաժանումը իր ծննդավայրէն: (Կու տամ գրաբար թարգմանութիւնը):

« Եւ խոնարհեցուցեալ զաւսցն հայեցուած ի բարձանց դարաւանդիս մինչեւ ի շէնք ուր ծնեալն էր, և յառեալ ի վերջին սահմանս նորին՝ ետեւ զհիւղ իւր, և զգագար սաղարքախիտ քղնեայն որ ամբաստանայ ի վեր քան զորմնափակ գաւրիւն: Հոսկ ուրեմն ետեւ և զպատուհան սեկեկին խորոյ, և քանգի բազմեալ էր ի խորս նաւակին, եղ զաջ իւր յեղերս նորին, և հանգոյց զմախտ իւր ի վերայ քաղկացն որպէս թէ նիւնեղով, և արտասուեաց լեղեայն »:

ԱՆԾԱՆՈԹ ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ: Իբրեւ քերթուածին մակագրութիւն, Դաւթի ձԼԶ սաղմոսին Երգ հատուածը Մ. Իշխան արտատպեր է, աշխարհաբարի վերածելով զայն: Ըստ իս՝ գրաբարը, պէտք էր նոյնութեամբ պահպանուի: Դասական այդ լեզուն մեր միակ հպարտութիւնն ու պարծանքն է: Ե՛րբ վերջ պիտի գտնէ գրաբարը գերեզմանելու այս տխուր, ընդվզեցուցիչ արարքը: Իտալացին կը գուրգուրայ լատիներէնին վրայ, նախակրթարաններու մէջ իսկ ուսումնասիրութեան առարկայ ընելով զայն: Մենք աւելի պէտք ունինք գուրգուրալու մեր գրաբարին վրայ: Ընդունինք աշխարհաբարը և գործածենք զայն՝ իբրեւ կենդանի և աշխոյժ լեզու, բայց պահպանենք նաեւ գրաբարը՝ իբրեւ անհուն գանձարան:

Սաղմոսի յիշեալ հատուածը ողորմելի աշխարհաբարով տրուած է արդէն:

Խնդրեմ, դուք կարդացէք, դուք բաղդատեցէք, դուք դատեցէք:

« Երբ մոռացայց զրեզ, Երուսաղեմ, մոռացի զիս աջ իմ: Կցեսցի լեզու իմ՝ ի քիմս իմ՝ թե ոչ յիշեցից զրեզ, թե ոչ նախ նռնագեցից զրեզ, Երուսաղեմ, սկիզբն ուրախութեան իմնոյ: Ի՞նչ չքեղ լեզու: Եւ հիմայ թարգմանութիւնը. — « Ո՛վ Երուսաղեմ, թե որ ես քեզ մոռնամ՝ րոյ իմ աջ ձեռքս զիս մոռնայ, թե որ քեզ չյիշեմ, րոյ իմ լեզուն իմ քիմքիս փակչի »: Հաւնեցա՛ք: Կը կարեկցիմ, ճիշդ ըսելով:

Ոտանաւորն ալ (« Անծանօթ հայրենի տուն ») մասնակի աղուոր տողեր բովանդակելով հանդերձ՝ ընդհանուր հետտորութիւն մը կը մատնէ: ԽճճԹԸ: Գիշերայած մեղապարտին յուզումն է, խոնարհ և սուրբ ընտանիքի մը տնակին « ցածիկ » պատուհանին առջեւ:

« Հո՛ն էր, այդ սուրբ բոյնին մէջ երջանկութիւնը երազ, Հո՛ն էր հանգիստն անխռով՝ կարծես մահէն ալ ազատ... Եւ նոյնիսկ —

Հաւատացէք իմ բուք խղճիս արիւնին —
Գտայ դարձեալ հօր ոգին Աստուծոյ
Հոն, անկիւն մը, խնդրիկն վրայ ծնկաջոց
Լուս աղօթող մամուն վրեւ դեռ արթուն... »:

Խորքը սրտայոյզ է այս քերթուածին թէ և ձեւը (տաղաչափութիւնը) աւելի յատուկ է հանդիսաւոր նիւթերու, (Տես Վարուժանի « Լոյսօր » — Հերակոս երգեր):

ԹԱԽԻՄԻ ՍԵՒ ԺԱՄԵՐՈՒՍ: Կորսուած տան յիշատակով կամ տեսիլքով՝ տանելի կը դառնայ անտունին կեանքը:

ՏԱՆ ՄԸ ԵՐԱՋԸ: Ո՛րքան անմատչելի ըլլայ ցանկութեան առարկան, այնքան աւելի գեղեցիկ և կենսատու կը թուի ան ցանկացողին: Տուն մը ունենալ կ'ուզէ քերթողը, բայց աղքատ է, կ'երգէ կարօտալի սրտով: Իր զգացումները չեն ապրուած, այլ երագուած, բայց երազը աւելի գեղեցիկ է՝ քան կեանքը:

ԶՈՐԻ ՏՆԱԿԸ: Գետակին քով, կղմինտը երգիքով տուն մը և մանկութիւնը, կորսուած՝ ի սպառ: Վերյիշում և ցաւ:

ԿՈՐԾԱՆԱԾ ՏԱՃԱՐԸ: « Լացի պատ »-ին դիմաց հրեան կ'արտասուէ նոր յոյսի արցունքներ: Հայորդին իր « յիշատակի կիսակործան որմ »-ին դիմաց՝ կ'արտասուէ անյուսութեան արցունքներ:

ԱՆՏԱՌԻՆ ՀԻՒՂԸ: Այստեղ քերթողի հոգին նոյննացած է արդէն հիւղին հետ: Բայց իր « մոթիֆ »-ը Մեծարենցեան զգայնութիւնէն հեռու է:

ԼԵՐԱՆ ՏՈՒՆԸ: Մտերիմ նիւթ մը դարձեալ,
հոնտորական շունչով պարփակուած:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՆԵՐԻ ՄԸ ԴԻՄԱՅ: Հակադրութիւն քաղ-
քենի մեծ շէնքին և Գեղջուկ հիւղակին միջեւ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՈՒՈՐՆԵՐՈՒՆ: «Ողջոյն» մը, «Եր-
նէկ Ձեզի» մը, անոնց որ կ'ապրին անի մը հո-
ղին վրայ «հնամայ հայրենիք»ին և «խրեւ երգ
ու յաղթանակ կը կանգնեն տուներ», վայելք մը՝
որմէ զուրկ է տարագիր հայը:

ՏԱՆՍ ԿԱՆՁԸ: Որուն ի լուր՝ տարագիրը չի՝
կրնար հաւատալ անողոք իրականութեան:

«Օ՛ կարծես սո՛ւտ է այսպէս,
միայն խաբկանք, չար երազ,
Որ դուն չըկաս, դուն մեռար,
ո՛վ սրբութիւնը մեր տան,
Որ ես դարձեր եմ հիմա,
փողոցային պիղծ սըղան,
Եւ ամբողջ անգ մը անտուն
կ'ողկւարի մաս առ մաս»:

ԱՒԵՐԱԿ ՏՈՒՆԸ: Օտարին աւերակ տան առջեւ
կը տրտմի հայորդին, բայց իր աւերակ տան
առջեւ ո՛վ կը տրտմի արդեօք:

ՔԱՂՏՐ Է ԵՐԻՒՔ ՄՈՒՆԵՆԱԼ: Լաւ յղացուած և
լաւ կառուցուած քերթուած:

ԱՒԱՐՏ

ՎԱՂՈՒԱՆ ՏՈՒՆԸ: Հաւատքի աղաղակ մը, ամ-
բողջութեամբ սրտայոյզ:

«Պիտի կերտեմ ես կրկին քեզ քերթուածի մը նման
Տուած մեր հին քարերուն բոցէ շաղախն արիւնիս
Պիտի ժայթքիս լուսագեղ դուն իբրեւ նո՛ր, անմահ բան,
Պանդուխտի սեւ օրերուն երկունքէն վերջ տանջալից»:

Հողին վրայ հայրերուն, ուր արեան տաք մուկ է դեմ՝
Պիտի կերտեմ քեզ զինով, անյագօրէն, քար առ քար,
Աչքերուն մէջ շատերո՛ւ ջերմ կարօտներ վազամեռ
Եւ թեւերուն ո՛ւժն ամբողջ հայ հանճարին շինարար:

Դուն յաղթանիստ ու հպարտ պիտի ըլլաս կեանքին դէմ.
Հոգի ու արեւն հայրենի պիտի հասակըզ զըրկեն.
Կռունկներու երամներ՝ ամպերուն հետ լուսագեղմ
Ազատութեան երգերով պիտի ճախրեն վերեւէն:

Պիտի կանգնեմ քեզ իբրեւ կենսագեղուն յուշարձան՝
Հեռուն անթաղ կորսուած մեռելներուն իմ բոլոր.
Քու մէջ հանգչել պիտի զայ անոնց հոգին անկայան՝
Երբ հոն ընդմիջւոյ բաբախէ արեւաշող կեանք մը նոր...

Կտուրիդ տակ երջանիկ պիտի յառնէ մաս առ մաս
Հարագատ խուճին անցեալի մեր մեծ տոհմին քարուքանդ,
Պարթեւ հասակն իմ եղբօր, քոյրիկիս դէմքը երազ
Ու տակաւին՝ նոր դէմքեր խորհրդասքօղ ու անյայտ...

ԲՈՒՐԻՆ՝ դէմ դուռը բաց պիտի ըլլայ շարունակ
Եւ լեցնեն պիտի քեզ ամէն առտու, երեկոյ,
Շէնշող քրքիջ ու զըրոյց, երգերու ձայն ու նըւազ,
Բայց և խաղաղ, լուռ պահեր՝ մտերմութեան ու սիրոյ:

Եւ երբ անցնին առջեւէդ, աղջիկ, տղայ, փոքր ու մեծ՝
Պիտի կենան ու ըսեն անոնք իրար ժպտալիւր.
— Այս է ահա տունը մեր բանաստեղծին, որ երգեց
«Տուներու երգն ու երկար տառապեցաւ տարագիր»:

*
* *

Մ. Իշխան միայն այս գրքով — որ իր առա-
ջին արտադրութիւնն է — իւրայայտուկ տեղ մը
գրաւեց, և պատուաւոր տեղ մը, ժամանակակից
հայ գրականութեան պատմութեան մէջ:

Կ'ուզէինք այստեղ մատնանիշ ընել կարգ մը
լեզուական — քերականական սխալներ՝ զորս
ցանկալի է չտեսնել նման հատորներու մէջ:

Ի՞նչ 12. «Եւ ոչ մէկ լոյս կանչեց ինձ»։ ուղղէ՝
«և ոչ մէկ լոյս կանչեց զիս»:

Ի՞նչ նոյն. «ինչքան», ուղղէ՝ «ինչքան»:

Ի՞նչ նոյն. «ո՛վ տեսիկ իմ հայրական», ուղ-
ղէ՝ «ո՛վ տեսիկ իմ հայրական»:

Ի՞նչ 16. «Կ'ըստանայ», ուղղէ՝ «կը ստա-
նայ և կարգա՛ւ կըր-ստանայ»:

Ի՞նչ 17. «Գրկեց իրեն», ուղղէ՝ «գրկեց զինք»:

Ի՞նչ 18. «Անոշ», ուղղէ՝ «անոշ»:

Ի՞նչ 21. «Արեւան», ուղղէ՝ «արեւան»:

Ի՞նչ նոյն «բոյն մ'արծիռի»։ ուղղէ՝ «բոյն
մ'արծոռի», կամ «բոյն մ'արծիռի»:

Ի՞նչ 59. «Ընդունէ ինձ» ուղղէ՝ «ընդունէ՛
զիս»:

Ի՞նչ 61. «Մարդկանց»։ ուղղէ՝ «մարդոց» կամ
«մարդերու» կամ «մարդկան»:

Ի՞նչ նոյն. «Ծո՛ւխ ես լոկ և ցնորք անմարմին
որ անվերջ կ'երագեմ»։ (ուղղէ՝ «գոր անվերջ
կ'երագեմ»):

Ի՞նչ 64. «Երկնաքերներ», արտառոց նորա-
բանութիւն, լաւագոյն է ըսել «երկնաքերներ»
կամ «երկնակարկառներ»:

Ի՞նչ 77. «Ծնկալոք»։ ուղղէ՝ «ծնրալոյր»:

Ի՞նչ նոյն. «ո՛ւժն ամբողջ» ուղղէ՝ «ո՛յժն ամ-
բողջ»):

Ի՞նչ 84. «Պիտի ըսեն անոնք իրար»։ ուղղէ՝
«պիտի ըսեն անոնք իրարու»:

*
* *

Մ. Իշխանի արտայայտուելու եղանակին և
գաղափարներու ազդեցութեան վրայ ակներեւ

է Վարուժանի ազդեցութիւնը: Իր սրտին մօտիկ
հեղինակներ են նաեւ Սիամանթոյ, Մեծարեան,
Թէքեան: Նոյնիսկ պատկերներ ունի անոնցմէ
փոխ առնուած:

Օրինակներ.

Ի՞նչ 9. «Երբոր ուղտերն յոյսերուդ
ա՛լ ոգեւոր զան ծունկի»:

Բաղդատէ՛.

«Երբ յոյսի ուղտն, ա՛լ խոնջ
ծալլէ ծունկերն իր...»:
(ՎԱՐՈՒԺԱՆ, «Լըռում»):

Ի՞նչ 14. «Տաք սրտին մէջ մայր հողին»

Բաղդատէ՛.

«Մին իրած է իր ամբողջ բոռնցը միւսին
Տաք վերքին մէջ լայնարաց»:
(ՎԱՐՈՒԺԱՆ, «Դիակին սայլը»):

Ի՞նչ 79. «Նետուած աղբիւն ամէնքին
ինձի մահի՛ճ եղաւ միշտ»

Բաղդատէ՛.

«Գըթա՛ կողերուս,
Անոնք աղբիւսի վըրա՛ն են պառկեր»:
(ՎԱՐՈՒԺԱՆ, «Ճանապարհ խաչի»):

Ի՞նչ 59. «Փակէ որմերդ իմ վրայ,
աշխարհին դէմ և մարդոց»:

Բաղդատէ՛.

«Փակեցեք զանոնք, (փեղկերը), անկարեկիր
և մեղաւոր ուսումնիկ իմաց, փակեցեք զանոնք
և մարդկութեան և ձեր աստօժուն երեսին»:

(ՍԻՄՄԱՆՔՈՅ, «Սուգ»):

Ի՞նչ 67. «Ես անակն եմ հովիտին

Եւ հոն զինին, մերզն ու ցորեն
Կ'ըլլան լեցուն ամէն աշուն,
Գիշերն հեռուն աստղ եմ կարմիր
Ճամբորդներուն համար անցնող,
Եւ ցերեկներն ալ սիրալիւր
Ծուխի երկդ մը ամպաղող»:

Բաղդատէ՛.

«Դաշտի ճամբու մը վըրան
Կամ ըստորտը լերան
Ուղեւորին ժամանման
Ըսպատոյ հիւղն ըլլայի.
Ու զրգանքիս կանչէի
Ես ճամբորդներն անժաման
Ու ճամբուս վրայ մենաւոր
Ու ճամբուս վրայ ոսկեման
Եկտրներու զիմաւոր

Ծխանիս ծո՛ւխն ամպէի

Հազար բարեք ես տայի,
Գա՛լը կրակին ճարճատուն,
Հունձքը բերրի դաշտերուն,
Բոլոր մերգերն աշունի,
Ու մեղր ու կաթ ու գինի:
(ՄԵՏԱՐԵԱՆ, «Հիւղը»):

Ի՞նչ 73. «Ահա նորէն քեզ համար կ'այրի հողիս այս
գիշեր,

Եւ ես լեցունած սրբազան ու բարբարոս զայրոյթով՝
Կ'ուզեմ քանդել, կործանել բոլոր տունն'րն անվրդով
Եւ տարածել անոնց տեղ ամէն կողմ սուգ և աւեր»:

Բաղդատէ՛.

«Շա՛խ... Ճարտատում մ'ալ շանթի: Ու կը տենչամ
Իբր Աստուած
Հըրամայել որ իյնայ ան աշխարհի վրայ ամբողջ,
Այրէ՛ բոլոր երկիրներն ու չըթողու ազգ մը ողջ...»:
(ԹԵՔԵԱՆ, «Մութ ժամեր»):

*
* *

Եթէ սէրը և մահը իրենց թեւերուն մէջ այն-
քան սաստիկ կերպով սեղմած չըլլային Պետրոս
Դուրեանը, ան երբեք պիտի չկարենար արտադրել
այնքան սայրասուր քերթուածներ: Նոյն գա-
ղափարը ունեցայ կարդալով «Տուներու երգը»:
Եթէ Մ. Իշխան տեղահանութիւն տեսած չըլլար,
պանդուխտ ապրած չըլլար, օտարութեան լեղին
համոտեած չըլլար, շատ հաւանաբար իր քեր-
թուածափունջը այս յատկութիւններով չկազ-
մուէր:

«Տուներու երգը», յիշաւի, իմ վրայ կը թո-
ղու ծաղիկներու փունջի մը տպաւորութիւնը,
նոյն ծաղիկներէ կազմուած փունջի մը, օրինակ
վարդերէ, ասկէ՛ բոյրի և երանգի սաստիկու-
թիւնը, մինչդեռ ուրիշներ կը սիրեն հրամցնել
այլազան ծաղիկներէ կազմուած փունջեր, մերթ
լաւ ընտրուած, մերթ ալ՝ գէշ, օրինակ՝ մանի-
շակին և մեխակին քով զանազան տեսակ խո-
տերով, և յաճախ՝ ... զուտ խոտերով:

*
* *

Ահաւասիկ գիրք մը՝ գնահատանքի արժանի:
Գիրք մը՝ յուզումով ու տաղանդով գրուած:
Գիրք մը՝ որ վերջապէս բանի մը կը նմանի:
Մինչդեռ կան բանաստեղծներ՝ որոնք մրցանակի
արժանի յամառութեամբ մը կը շարունակեն
արտադրել գործեր՝ որոնք ինչ բանի կը նմա-
նին, չէս գիտեր, գործեր՝ ուր կ'երեւին «Յայտմ-

աւուրք»ի պէս երկար ոտանաւորներ, որոնց մէջ տարօրինակ ճարպիկութեամբ թխմուած են առուակը, թռչնակը, աղջնակը, կայծակը, լուսնակը, կոչնակը և ուրիշ բաներ:

* *

Գիրքը փակելէ առաջ՝ չեմ կրնար չիշել Լա-մընէի հանրածանօթ տողերը.

«Lorsque je voyais, au déclin du jour, s'élever du creux d'un vallon la fumée de quelque chaumière, je me disais; Heureux celui qui retrouve le soir le foyer domestique et s'y assied au milieu des siens! L'exilé partout est seul»:

Ինչ կ'ուզէք ըսէք, գրաբարը աւելի անոյշ կը հնչէ ակօնջիւս. թոյլ տուէք որ այդ վեհ լեզուով կրկնեմ այս սրտախօսիկ հատուածը.

«Ի խոնարհել արեգական՝ տեսեալ իմ գծոշխ շինի, ի վեր առնարձեալ ի ծոցոյ հովտին, աւելի. Վա՛յ որ ընդ երեկս գտանիցէ գյարկ իւր ընտանի և առ իւրսն աւնցեալ բազմիցի.

Միայնակ է արքայազն աւննայն ուրեք»:

Որքան ատեն որ աշխարհի վրայ հայ պանդըխտութիւնը, տնազրկութիւնը գոյութիւն ունենայ, նոյնքան ատեն Մ. Իշխանի «Տուներու երգը» պիտի մնայ անմեռ և յուզէ հոգիներ:

ՀԻՍՏ ՔԱՅԱՐԵՆՆ

ՅԵՏ ԳՐՈՒԹԵԱՆ. — «Կրակը» այլազան ծաղիկներէ կազմուած փունջ մ'է, հետեւաբար զուրկ է գոյնի և բոյրի այն սաստկութենէն՝ զոր ունի «Տուներու երգը»: Յանկալի էր որ Մ. Իշխան չհեղէր իր առաջին ուղղութենէն, և գտնէր ուրիշ արժանի նիւթեր՝ որոնց կարելի ըլլար ամբողջ հատորներ նուիրել. — «Որբերու երգը», «Հերոսներու երգը», «Սիրոյ երգը», ինչ գիտնամ, վերջապէս նոյն ծաղիկներէն կազմուած փունջեր, որոնք, տարիներ ետք, միասին կազմէին շքեղագոյնը, փռնջերու փունջը:

Հ. Բ.

Վեմետիկ. Նոյ. 1938

ՄԵՐՈՒՊ ԱՐԲ. ՏԵՐ ՄՈՎՍԵՍԵԱՆ. «Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և Գաղի եկեղեցիները և վանական շինութիւնները». Երուսաղէմ, 1938:

Շատ բաներ գրուած են մեր աշխարհի հնու-թեանց մասին: Անոնց շատերու տեղեկութիւնք ցիրուցան ձգուած են հայ թերթերու մէջ, և ոմանցն ամփոփուած առանձին աշխատութեանց մէջ, բայց միշտ կարօտ մնալով ամբողջական

և կատարելագոյն ուսումնասիրութեանց: Կան ալ՝ որ զուրկ մնացած են կարեկցող այցելունե-րէ, և ժամանակէն կամ պատահարներէն ի սպառ քայքայուած ու մեռած են հայ արուեստին ու պատմութեան համար:

Մեր հին և կարեւոր սրբարաններէն են յիշեալ երեք վանքերն ալ, որոց անձամբ այցելած է Մագիստրոս Սրբազանը, և փափագած տալ ազգիս անոնց լաւագոյն ուսումնասիրութիւնը: Նա ինչ որ տեսեր է հօն, բնութիւն և արուեստ, մանրամասնօրէն ամփոփեր է իւր յուշատետրնե-րուն մէջ: Յետոյ յառաջ քաշեր է մեր հին պատ-միչներն ու նոր գրիչները, անոնց տեղեկութիւն-ները համեմատելու ու խառնելու է իւր տեսածնե-րուն հետ, լաւագոյն կերպով լուսաբանելով զանոնք, սրբագրելու ու լրացուցելու է նոյն վա-րերու արձանագրերը, որ անկատար կերպով ու չափով կարգացուել և յառաջ բերուել էին ու-րիշներէ: Շատ օգտակար գործ մ'է ուրեմն իւր կատարածը, որ միանգամայն գիտակից ակա-նատեսի մը կենդանի երանգը կը կրէ:

Սակայն մոռնալու չենք՝ որ մեր հայրենի աւերեալ կամ կիսաքանդ հնութեանց մասին չէ կարելի ամբողջական ու վերջնական նկարա-զրութիւններ տալ՝ առանց գիտնական պեղում-ներ կատարելու: Իսկ այդ գործը պետական օժանդակութեամբ կը լինի: Մերոպ Սրբազա-նին կը պակսէր թէ՛ օգնութիւնը և թէ՛ հարկաւոր ժամանակը, որով կատարելութեան դրոշմը տար իւր աշխատութեան: Նա կատարել է ինչ որ անհատական կարողութիւնը կը ներէր, և լու-սանկարներն իսկ փոխ առած է ուրիշներէ: Ինքն իսկ կը զգայ և կը զգացնէ զայդ, «թողնելով որ ուրիշները անշուշտ կը լրացնեն իմ թերու-թիւնները, և կ'օգտուին այն տուեալներին» որ կը գտնեն իմ աշխատութեան մէջ, և աւերման հետեւանքով այլ եւս չկան բուն յուշարձանների վրայ, իրենց տեղում»:

Այո՛, Սրբազանէն աւելին կարելի չէր պա-հանջել. և ինչ որ ըրած է արդէն կարեւոր նպատ-մ'է մեր հին յիշատակաց պահպանութեան հա-մար, և ապացոյց իւր ազգասէր սրտին, որ թելադրեր է զայդ: Եւ մենք շնորհակալութեամբ ընդունելու ենք այդ երկը. զի ամէն լուսայ՝ որ կը ձգուի հայ գրականութեան զանազանակին մէջ, կը ծառայէ անոր հարստանալուն: Երանի՛ թէ ամէն ուղեւոր նոյն հոգով և աչքով նայած լինէր մեր սրբութեանց: Ո՛րքան գանձեր փըր-կուած պիտի լինէին անդարձ կորստենէն.

Հ. Վ. Հ.

Ծ Փ Ո Ւ Ն Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ն Ե Ր Ը

Արձենթինայի Ռիոյ տելլա Փլաթա թա-փող Փարանա գետին ընդարձակ տելլայի շրջակայքը կը բնակի 70,000էն աւելի կա-թողիկէ դաղութ մը, եկած աշխարհիս ամէն կողմէն:

Այս ժողովուրդը կ'ապրի ցրուած գետին բոլոր ճիւղաւորումներուն երկայնքին, և մինչեւ վերջին ժամանակները զուրկ էր կրօնական ամէն միութարութենէ:

Ստուգիւ, զամէնքը դոհացնելու համար, դուցէ հազար եկեղեցի անբաւական ըլլար: Քանի որ Ամերիկայի մէջ ենք, լուծումը Գոլոմպոսի հաւելթին պէս բան մը եղաւ. — Եթէ հաւատացեալները եկեղեցի չէին կրնար երթալ, եկեղեցին հաւատացեալնե-րուն պէտք էր դալ: Եւ ահա, այն շրջանի ժողովուրդին նպաստով. ծնունդ առաւ Ծփում ժողովրդապետութիւնը: Բայց ոչ թէ միայն մէկ հատ, այլ եկեղեցիներու փոքրիկ տորմիդ մը (մինչեւ հիմա եօթ հատ) ծով իջաւ Պուենոս-Այրէս, և այժմ կը նաւարկէ Փարանայի տելլային վրայ:

Ծփացող եկեղեցիները ամէն բան ունին, ինչ որ կարելի է գտնել ցամաք երկրի վը-րայ եղող եկեղեցիներուն մէջ. — Փոքրիկ զանգակատուն մը խաչով, սրբազան ար-ձան մը (հրամանատարի կամօրջին վը-րայ), և վայելուչ սրահ մը, ուր երկու հարիւր հոգի կրնան համախմբուիլ, ներ-կայ ըլլալու համար կրօնական արարողու-թիւններուն:

Աւելորդ է ըսել թէ բոլոր զարդերը և սպասները տեղւոյն սրբութեանը պատշաճ են. պատկերները, ապակեփեղկերը, խոս-տովանարանները, օրհնած ջուրի աման-ները:

Ծփուն եկեղեցւոյն յատուկ զարդերէն մին է՝ պերճանքը քրիստոնեայ գլխաւոր երկիրներու դրօշներուն, որ կը ծածանին զանգակատունէն ցուկ երկարող պարանի մը վրայ: Ուրիշ հետաքրքրական յատկու-թիւն մըն ալ այն է, որ նաւարկութիւնը

յանձնուած է քահանաներուն: Այնպէս որ, երբ եկեղեցական պաշտամունքները վեր-ջանան և խարխիւր վերցուի, քահանա-ները նաւազներու կը փոխուին:

Երբ Աստուծոյ նաւը մօտենայ ափունքի մը, փոքրիկ զանգակին մեղմիկ հնչիւննե-րը և սուլիչին թաւ դօշիւնը կ'աւետեն հաւատացեալներուն թէ եկեղեցին հասած է: Երկու օրուան դադարի ատեն շրջակայ բնակիչները ժամանակ կ'ունենան գետ հասնելու, նաւակ նստելու և չողենաւ երթալու:

Երբոր ժողովրդապետութեան հաւա-տացեալ ժողովուրդին հոգեւոր պէտքերը լրիւ հոգացուին, նաւը խարխիւր կը վեր-ցնէ: Ժողովրդապետը սպիտակ շապիկ կը հագնի և ղեկին առջեւ կ'անցնի: Ո՞վ կրը-նայ առաջնորդել Ծփացող եկեղեցին՝ եթէ ոչ իր ժողովրդապետը:

Եւ այսպէս կը շրջի կայանէ կայան ու ղետախորչէ ղետաբերան. երբ օդը տաք ըլ-լայ կամ սառնամանիքի աստիճան ցուրտ՝ Ծփուն եկեղեցին առանց կանգ առնելու, կ'ակօսէ Փարանայի ջուրերը, բեռնաւոր-ուած միայն բարոյական միութարու-թեամբ:

Երբեմն Գթութեան քոյրեր նաւ կը մըտ-նեն հեռաւոր վայրեր երթալու համար, ուր հիւանդ մը կայ խնամելիք կամ բարե-զօրծութիւն մը ընելիք:

Ծփուն եկեղեցին ստէպ խարխիւ կը նե-տէ ղետային նաւարկութիւններու միջեւ, և այն ատեն նաւազներն ու բեռնակիր-ները փոխն ի փոխ վեր կ'ելլեն եկեղեցա-կան արարողութիւններուն ներկայ գըտ-նուելու համար:

Ո՞վ կրնայ ըսել, թէ ո՞րքան միութարու-թիւն տարած են այս համեստ նաւերը, ամէնէն աւելի անմարդի գօտիներուն մէջ բնակող ու իրենց սիրելիներէն և հայրենի երկրէն հեռու գտնուող մարդոց:

Հետախոյզ